

Ամբաստանապետ
Խմբագրութիւն «Փիւնիկ»
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԼԳԻՐՏՈՍ

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՆԵՍՅ 25

ԲԱԺՆԵՐԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է



ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՆԵՍՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏՆՆԵԿԱՆ ԲՈՎՆ 6



ՓԻՒՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՍԶՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԵՌՔԷ ԿՐ ԾԱՆՈՒԻ ՀԱՏԸ ՄԵԿ ԴՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐԻ

31 ՕԳՈՍՏՈՍ 1901


ԹԻԻ 14

ՕՏԱՐ ԴԼՄԲԵՐ

Օտար բառը թո՛ղ պաղ չ'հնչէ ա-
կանջներուն. իրօք, Տօգդ. Տիւրն, օ-
տար դէմք մ'է, Հայ մը չէ, բայց այն
օտարն է, որ շատ մը Հայերէ - Կաթո-
ղիկոս, Պատրիարք, Առաջնորդ, Վար-
չապետ, Ժողովական, Գրագետ, Խրմ-
բագիր, եւն, եւն. - շա՛տ աւելի բարձր
է և մեծ՝ անթիւ ծառայութիւններով
զորս մատուցած է հայութեան, քա-
ղաքակրթեալ աշխարհին՝ ի լուր հռչա-
կելով դարավերջիկ դժոխային բար-
բառութեան մը սե՛ւ ոճիրները, որոնք
դեռ կը շարունակեն: Տօգդ. Տիւրն մին
է այն պաշտելի դէմքերէն, որոնք մեր
ժամանակակից պատմութեան արիւնա-
լի էջերը պիտի գրուեն ոսկեզօծ տա-
ռերով: Թո՛ղ ա՛մեն Հայ կարգայ մե-
ծանուն Հայաստանի համառօտ կենսա-
գրականն ու բազդատութեան գնէ
այդ Հայաստան Օտարները մեր Օտարա-
մոլ Հայերուն հետ:

ՕՏԱՐ ԴԼՄԲԵՐ

ՏՕԲԹ. Է. Ճ. ՏԻԼԸՆ



Սըր Ռիւլերմ Թ. Ըսթիտ՝ Character
Sketch (Ուրուագիծ) ընդհանուր վեր-
նադրինտակ Review of Reviews ի Յուլիսի
ամսաթուոյն մէջ՝ ին յօդուածին նիւթ
կ'ընարէ Տօքթ. Էմիլ. ճօղէֆ Տիւրն:

Տօքթ. Տիւրն թէև քաջամանօթ
դէմք մը չ'է, բայց աիպար Անգլիացի
մըն է, պետք է ճանչցուի ո՛չ միայն
Անգլիացիներէն, այլ մեզմէ՝ Հայերէս
ու անոր կեանքը հետաքրքրէ ամեն
մարդ: Առաջնակարգ օրագրող մըն է,
հմուտ լեզուագետ-քանասէր մը, ու-
սուցիչ մը, գրագետ մը և օրինակելի
թղթակից մը. ու իր թղթակցութիւն-
ներն են թերևս, որ պիտի աճմահա-
ցունեն զինք: Սըր Ըսթիտ Մեծ Օրա-
գրողի մասին կ'ըսէ.

«Եթէ հարցուէր ինձ քէ՛ ո՛վ է
Անգլիական Մամլոյն արդի ամենա-
նշանաւոր օրագրողը, առանց վարա-
նելու պիտի պատասխանէր՝ Տօքթ. Էմիլ

ձօզէ՛ճ Տիւրն, ներկայ յօղուածիս նիւթը: Չեմ հանդիպած օրագրողի մը որ Տօթք: Տիւրնէն ասելի կարող, միտքը մեակուած ու յանդուգն ըլլայ: Կ'սխալուանամ ես անոր վրայ: Յիսուն տարեկան չէ դեռ: Ու, թէեւ Անգլիական թերթի մը խմբագրապետ եղած չէ, եւ շատ կարելի է որ Լոնտոնի խմբագրներուն տասնէն մէկը տեսած չ'է զինք ու շատ տերը՝ անունն անգամ լսած չ'են անոր, սակայն նա՝ իր պատշոնին մէջ՝ առաջին տեղը կը գրաւէ:»

«Տօթք Տիւրն խառնուածով՝ արուեստատէր մըն է. բնագրով՝ օրագրող մը. ընտրողութեամբ՝ դպրոցական-փիլիսոփայ մը, եւ իբրեւ փառատէր՝ բաղախազէտ մը:»

Ատկէ զատ, կը յաւելու Սըր Սթիւա, Տօթք. Տիւրն մօրմէ Անգլիացի, հօրմէ Իռլանտացի է. ծնած է Իռլանտայի մէջ: Նախնական ուսումը առած է Տրալլին. ապա Փրանսոս դպրոցած է ու «Քօլէժ սը Փրանս»ի մէջ baccalauréat ի պատրաստուած. ուրկէ զացած է՝ յաջորդաբար՝ Իննսպրը, և, ապա Լայբցիկի ու Թուրինիէնի համալսարանները:

Տօթք. Տիւրն Գերմանիայէն կը բաժնուի, կ'երթայ Ռուսիա, ուր կ'ըսկըսի մասամբ՝ կեանքի պոյքարը: Եւրոպական եօթն տարբեր քաղաքներու համալսարաններէն շրջաբաւարտ եղած է և երեք անգամ իբր լեզուագէտ՝ բարձր աստիճաններ պտտցած. Լատին, հելլէն, սանսքրիզ, արաբ, եբրայական լեզուներէն զատ՝ սովորած և ուսումնասիրած է նաև՝ Ռուսիոյ մէջ՝ զանգիկ և պարսիկ լեզուները՝ Նոյնպէս քաջ հայագէտ մըն է Տօթք. Տիւրն. Մամուլի մէջ իր առաջին քայլը կ'առնէ նա՝ ի Սէն-Բեդրզպուրկ:

«1880ին, կ'ըսէ Սըր Ուիլեմ Թ. Սթիւա, Տօթք. Տիւրն իբր Ռուսիոյ Արեւելեան լեզուաց Ս. Բեդրզպուրկի մէջ բերանացի բնութիւն սալէ վերջ՝ առաջին անգամ ըլլալով՝ «Բէթրուպուրկիփա Վիէտմօսքի՝ հանդէսին մէջ կը գրէ իր անգրանիկ յօդուածը. — Ռուսմատիւրօսիւն մը Զանդիկ եւ

Սանսքրիզ լեզուներուն վրայ: 1883ին Քարթօճի համալսարանը կ'երթայ, ու հոն իբր բանատէր եւ դասական լեզուաց ուսուցիչ՝ բնութիւն սալով Ծեբալոյսի կողմէ միաձայն հաւանութեամբ՝ նոյն համալսարանին պէտք կը կարգուի: Այդ ատենն էր որ բնագրական մը գրեց հայերէնին Հնդիկ-Եւրոպական լեզուներուն կարգէն լիւնելուն վրայ, եւ հայ հին պատմագրներէն մին ուստերէնի քարտանկեց: 1884 Ապրիլ 19ին հրատարակաւ պատշապանեց իր այս բնագրութիւնը, որուն վրայ Տօթք. Լեզուաբնութեան եղաւ եւ անմիջապէս վերջը դաստառ կարգուեցաւ յիշեալ գիտութեան. Ասոր վրայ Վենետիկի միաբանութեան անդամ ընտրուեցաւ եւ, իրմէ զուտ, օտար ըլլալով, ոչ ոք արժանացած է այս պատուոյն: Իսկ Քարթօճի համալսարանին մէջ հայ գրաբարի եւ Արեւելի Պատմութեան դասերը կ'աւանդէր: Տօթքը ամուսնացած է ռուս տիկնոջ մը հետ, որմէ ունեցած է երեք զաւակ:»

Տօթք. Տիւրնի գրական գործունէութիւնը՝ հանդէսներու ու թերթերու մէջ գրած յօդուածներուն մէջ կը կայանայ, բայց գրած է նաև գրքեր Փրանսերէն և ռուսերէն լեզուներով, որոնք լեզուաբանական և գրական տեսակէտով մեծ արժէք ունին: Փրանսական, Գերմանական, Պելճիքական, Աւստրիական հանդէսներու աշխատակցած է յաճախ, ու, ի վերջոյ, ունեցած է նաև իր օտկանը:

«1885ին, կը գրէ Review of Reviewsի յարգ. յօդուածագիրը, Տօթքոյ՝ Բրօքլետոն սը Հաւլէցի հետ՝ հիմնեց Փրանսերէն լեզուով Le Musée գրական հանդէսը, որուն համար թէեւ սկիզբի տարիները մեծ դժուարութեանց հանդիպեցաւ, բայց ի վերջոյ յաջողեցաւ բարեբաղդաբար: Տօթք. Տիւրն հիմա մաս չ'ունի այլ ես այլ հանդէսին մէջ, սակայն կը տարուակէ դեռ:»

1888ին Տօթք. է. Ք. Տիւրն կ'անցնի Օտէսա, ուր նախ Odessa Messengerի, ապա՝ Odessa Newsի մնայուն աշխատա-

կինը կ'ըլլայ: Տարի մը վերջը, 1889 ին, Օտէսսայի օրադրութիւնը կը թողու, կուզայ Լոնտոն, ու հոն կ'աշխատակցի Pall Mall Gazetteին, St. Jamesին, Review of Reviewsին, և Fortnightly Review ին, «Է. Պ. Լանրն» կեղծանունին տակ: «Է. Պ. Լանրն» վերջին երկու հանդէսներուն մէջ՝ կը գրէ ընդհարապէս ուսս գրականութեան վրայ: Աշխատակցած է նաև Contemporary Reviewին, և որուն մէջ կը գրէ մինչև հիմա: Տօքթ. Տիլլըն նոյն անունը ստորագրած է՛ միշտ, փոխած է յաճախ ու իր ծածկանունները, կ'ըսէ Սըր. Ուիլ. Թ. Ըսթիտ, լեզուն կը կազմեն: Տօքթոս Տիլլըն, «այդ նոր Միցցաճօղին» իր նմանը չ'ունի խճագրական ճիւղին մէջ, և «Հաւանականաբար, կը շարունակէ պատ. յօդուածագիրը, միակ մարդն է ան Անգղիական Մամլոյն մէջ որ կարեւայ հաւասար դիրութեամբ անգլիերէն, ճրանսերէն, գերմաներէն եւ ռուսերէն լեզուներով խմբագրականներ գրել»:

Տօքթ. Տիլլըն, երբ յետագարծ ակնարկ մը նետենք, պիտի տեսնենք թէ՛ շատ մը ծառայութիւններ մատուցած է անգղիական Մամլոյն ու մարդկութեան՝ իր կեանքի շաւղին մէջ, բայց նա ամենուն յարգանաց, և մասնաւորապէս հայերուս երախտագիտութեան արժանի է, գէպի Հայաստան և այլուր ըրած ճակորդութեանց ու գրած թղթակցութեանց համար: Եւ իրօք իրեն կատարած ամենակարևոր գործերն են, կ'ըսէ Սըր. Թ. Սթիտ.

«Նախ՝ 1894-95ին Հայաստանէն եւ երկրորդ՝ Սպանո-Ամերիկեան պատերազմի ժամանակ Սպանիայէն ըրած քրթակցութիւնները. Երրորդ՝ կրեւէն գրած նամակները. Չորրորդ՝ Տրէյքիսի խնդրոյն առթիւ Ֆրանսայէն գրածները. Հինգերորդ՝ անցեալ տարի իր Չինաստան երթալը. եւ, Վեցերորդ՝ Ռայքի հետ ունեցած սեսակցութիւնները»:

Չանց ընելով Տօքթ. Տիլլընի միւս բոլոր թղթակցութեանց ու ճակորդութեանց պարագաները, զորս գուհադեղ ոճով մը կը թուէ պատ. յօդ-

ուածագիրը, կ'առնեմ այն հատուածը ոչ «Հայաստանի Իէպրերուն» կը վերաբերի.

«Տօքթ. Տիլլընի միայն կը պարտիք, կը շարունակէ Սըր Ըսթիտ, այն ամեն գազանութեանց մանրամասն ու լիուլի տեղեկութիւնները, զոր թուրքերը ի գործ դրին Հայաստանի մէջ: Մաքահամ ինչ որ ըրաւ 1876ին Պուլկարիոյ մէջ Daily Newsի համար, նոյնը կասարեց Տփ. Տիլլըն Հայաստանի մէջ Daily Telegraphին համար»:

Երկուքին ալ պաշտօնը թէ և թըլթակցիլ էր, բայց տեսնելիք, աւելի ճիշդը, տեսած գործերնին խիստ տարբեր եղան իրարմէ: Ատկէ զատ.

«Պ. Մաքահամի կասարելիք գործը, կը շարունակէ նա, շատ դիւրին է: Մինչեւ որ կոտորածը չ'ընցաւ, պոյսի չ'ելաւ ու անիկա ալ Ամերիկեան դեսպան՝ Պ. Շուլերի հովանաւորութեամբ: Պ. Մաքահամ թուրք կառավարութեան պատգամեալ էր եւ անոր մէկ մազն անգամ վստիգի տակ չ'էր: Մինչդեռ Տփ. Տիլլընի՝ գազանութեանց տեսարանն ընելիք այցը՝ բոլորովին գաղտնի էր Սուլթանէն»:

Տփ. Տիլլըն ստիպուած էր ուրեմն տեղւոյն համեմատ իր ձեռք, տարազը փոխել. — Հայաստանի մէջ եղած ատեն՝ իր հազած տարազին ներքեւ՝ կատարեալ Գիւրտ մը կը կարծես զինք. կատարեալ Չէրքէզ մըն է նա՝ Կովկասէն, Անգր-Կովկասէն անցնելու պահուն և Սքեղայ մը՝ կրէտէ գոտուած միջոցին:

Հոս Սըր Ուիլերմ Թ. Ըսթիտ խօսքը կուտայ Տփ. Էմիլ ճօզէֆ Տիլլընի, որ ինքն իր բերնով կը նկարագրէ Հայաստանի կոտորածի ժամանակ իրեն հոն ըրած այցելութեան պատմութիւնը: Տփ. ը կ'ըսուի այսպէս.

«Վիէնայէն Հայաստան գնացի: Չարին հիւանդութեան եւ քաղման ժամանակ Անգղիա կը գտնուէի, երբ խնդրեցին ինձմէ որ Հայաստան երթամ, ու ես առանց ո՛ր եւ պատրաստութեան մեկնեցայ: Թուրքիա գնացի եւ Մեծ Վեզիրը, որ շատ բարի կ'երեւէր, լաւ ըն-

դունելութիւն մ'ըրաւ ինձ եւ խնդրեց որ
 մէջ տեղ եղած բուրբերն ուսումնասի-
 րեմ: Ուզեցի Սուլթանը տեսնել, եւ նա
 պատասխանեց ինձ որ պիտի ջանար կա-
 րելի ընելու այդ տեսակցութիւնը: Բայց
 երկու օր վերջը մարդ դրկեց ինձ թէ՛
 եթէ Սուլթանը զիս ընդունէր, միւս
 օրագրողներն ալ պիտի նսպաուէր ընդու-
 նելու: Գիտէր որ վերջապէս հայկական
 խնդրոյն ամբողջ ներսը դուրսը պիտի
 գիտնայի, խոստացաւ բոլոր թղթերն իմ
 տրամադրութեանս տակ դնելու: Եւ ա-
 տով չ'եմ կրնար գոհանալ, ըսի-թուղ-
 քերը միայն բառական չէին. եւ կու-
 զեմ որ Հայաստանը եւ իմ աչքովս
 տեսնեմ: «Եթէ վստահ չէք, ըսաւ Վեգի-
 րը, թուղթերը ձեր դեսպանին ցոյց տուէք.
 Սուլթանը յօժար է ասոր»: «Այդ ալ
 բառական չէ, ըսի. կուզեմ իսկու-
 րիւնը գիտնալ, ու ասոր համար Հայ-
 աստան պիտի երթամ»: Այդ ասեմ ինձի
 սուտ կուգար հայկական կոտորածը:
 Յետոյ Նախարարութենէն ինձի մարդ
 եկաւ որ հրատարիմ նպատակէս. Մե-
 ժեցի եւ Մեծ Վեգի-րին պնդեցի ըսածիս
 վրայ: «Բայց մենք հրահանգ տուած ենք
 որ ձեզի պիտի չ'թողուն սահմանա-
 գրուիլէն անցնելու»: «Բայց հակա-
 ռակ ձեր հրահանգներուն, պիտի եր-
 րամ, ըսի.» «Ներս չ'էք կրնար մտնել»,
 աւելցուց նա: «Հոգ չէ,» պատասխա-
 նեցի, եւ առանց մէկու մը բան մ'ըսե-
 լու թէ՛ ուր կ'երթայի, ուղեւորեցայ
 դէպի Թիբէլիզ, ուր, տեղւոյն Կառա-
 վարիչը, որ անձնապէս ծանօթ էր ինձ,
 բաց նախակ մը տուաւ, որով կարող
 եղայ Կովկասի եւ Անդրկովկասի բոլոր
 գիւնորական քաղաքներէն անցնելու:
 Անկէ գացի Կարս ուր բանի մ'օր մը-
 նացի, Հայաստան անցնելու համար
 գաղտնի պատրաստութիւններ տեսնելու
 պատճառաւ: Չանոնք գործածելու պէտք
 չ'եսայ սակայն. որովհետեւ խոյս տա-
 լիք օրս եկած չէր դեռ, երբ զուար-
 նալի բայց շատ օրինաւոր միջոց մը
 խորհեցայ ազատ կերպով Հայաստան
 մտնելու համար — իսպախ Սպայի մը
 կերպարանքն առի. թուրքերը՝ սահմա-

նագլուխներուն վրայ՝ գիւնորական
 պատճառով ընդունեցան զիս. հայ կա-
 նայք անէժնեք կը տեղային գլխուս:
 Վերջապէս անվնաս Կարին հասայ:
 Իմ հոն երթալս մեծ աղմուկ հանեց:
 Տեղւոյն կառավարիչը իր քով կանչեց
 զիս. Գոլիսէն եկած երկար հեռագիր
 մը կար իր առջեւ, որուն մէջ կար եւ իմ
 անունս: Միկարան ձեռքէն վար ինկաւ,
 երբ հասկցաւ որ իմ անունս էր այն: «Ե՞րբ
 պիտի մեկնիք», հարցուց նա ինձի: «Անա-
 պարելու բան մը չ'ունիմ» պատասխա-
 նեցի: Ատոր վրայ թուրք կառավարու-
 թիւնը Սըր Յիլիք Քըրքիէն պահանջած
 էր որ զիս դուրս հանէ քաղաքէն: Մե-
 ժեց նա բնականաբար: Մնացի Հայաս-
 տան ու գիւղերը կը քրէի՝ երբեմն
 կնոջ, երբեմն Քիւրքի զգեսով: Տանիք-
 ներու տակէն կ'երթայի ընդհանրապէս
 ու կը մտնէի հայ տներ. յետոյ փա-
 խըստականներ փնտնելու կ'ելնէի:
 Մուշի Յանձնաժողովին կը դրկէի գա-
 նոնք եւ անոր վկայութիւններն ալ ան-
 միջապէս *Daily Telegraph*ին: Քիւրք Տե-
 ղապեք մը կար որուն համար կ'ըսէին
 թէ՛ նմանը չ'եսեսնուած գազանութիւն-
 ներ ի գործ դրած էր: Շատ Եւրոպացի-
 ներ չ'էին հաւատար այս պատմութիւն-
 ներուն: Փնտնեցի այդ մարդը, բայց
 վերջէն իմացայ որ ճանկական շրթա-
 տարին վրայ յարձակելուն եւ թուրք
 զօրակաւի մը կնոջը հայիոյած ըլլա-
 լուն համար բռնուած, բանտարկուած
 էր եւ մահուան պիտի դատապարտուէր:
 Ուզեցի տեսնուիլ այս մարդուն հետ եւ
 անոր վկայութիւններն առնել: Շատ մը
 ջանքեր ըրի անոր հետ հաղորդակցու-
 թեան մտնելու համար. այնպէս որ,
 բանտապետը կաւարեցի վերջապէս ու-
 պէտքի երկու ժամու չափ իմ մօտ թողու
 զայն: Վերջին պահուն լուր եկաւ թէ՛
 տուածս շատ քիչ էր ու վստայ խիստ
 ծանր. բայց եթէ ստակը աւելի տամու
 երկու ալ պատանդ, Քիւրքը պիտի գայ:
 Համաձայնեցայ ու Քիւրքը եկաւ: Բոլոր
 գիւղերը քովս պահեցի — որովհետեւ վախ-
 ցայ թէ վերջէն չ'էին հաւատար որ տեսն-
 եմ զինք — ու առտուն՝ երկուփս լուսա-

նկարը առի: Քիրս ցեղապետին վկայ-
ութիւններուն վրայ յեկով էր որ Կլա-
սչսոսն ասեմաբանեց Չէսքի մէջ,
յայտարարելով որ Թուրք կառավարու-
ի ինը կուրամար իր ըրածները: Երբեմն
երբեմն՝ ծայտալ՝ սանիկներու տունե-
րուն մէջ Հայերը տեսնել կ'երթայի:
Այդ տուներէն միոյն մէջ հանցեցած ըլ-
լալու էին զիս, որովհետեւ սուրնը
(որմէ քիչ խմեցի բարեբաղդաբար) թու-
նաւորուած էր: Խմելէս վերջը զգացի.
Երեք քարաթ վսանգաւոր կացութեան
մը մէջ կը գտնուէի: Ծառաս ալ թու-
նաւորուած էր. բայց չ'մեռաւ: Շաս
անգամ յայտարարեցին ինձ թէ՛ քաղէն՝
ողջ դուրս չ'պիտի ելնէի. ու այս ազ-
դարարութիւններուն մէկ քանին պաշ-
տօնական էին: Գլխուս շաս ձիւներ
եկան թէեւ, բայց Երուսա վերադար-
ձայ անվնաս:

Տօքթ. Տիւրնի այս նկարագրու-
թիւնը որ Contemporary Review ին մէջ
հրատարակուած է վերջերս, Անգլիոյ
մէջ մեծ տպաւորութիւն մը թողած է
հասարակութեան վրայ: Հայաստանի
մինչև հիմա չ'աղտուելուն պատճառը
Տօքթ. Տիւրն՝ նոյն յօդուածով՝ Տէրու-
թեանց ետասիրութեան և Լորտ Սալըզ-
պըրիի թուլաստութեան կը վերագրէ.
Բայց այնպիսի դատապարտութեամբ
մը կը դատապարտէ թուրք կառավար-
ութիւնը, որուն նմանը անդղիերէնով
զրուելը տեսնուած չ'է: Ու Մեծ Մար-
դասէրին սիրտը այնքան կը ցաւի որ
հայ որդեկորոյս, վշտաբեկ մօր մը
սրտէն ժայթքած սա խօսքերը մէջ կը
բերէ. Ասուած անգամ խենդեցաւ, եւ
Կասաղիներն ու դեւերը մարմին առած
կը շրջին աշխարհի վրայ:

Տօքթ. Տիւրն, ինչպէս կ'ըսէ Սըր
Սթիա, պարզ թղթակցի դէր մը չէ որ
կատարած է: Թափարականի մը կեանք
անցուցած, կեանքը վտանգած է յա-
ճախ, միմիայն այն դատերուն, այն
մարդոց ու կանանց պաշտպանութեանը
համար, որոնց համակրած է. սիրած է
ծողովն ու սրտովը և անոնց տառա-
պանքը նկարագրած:

Բայց, ա՛նղ, որ լաւ ապագայ մը
ունենալ չ'թուիր նա այսօր, ու

«Ո՞վ գիտէ ինչ պիտի ըլլայ Տօքթ.
Տիւրնի ապագան, կը հարցունէ Պատ.
Յօդուածագիրը: Մինչեւ հիմա լաւ
կեանք մ'ունեցած ըլլալ կը թուէ.
Բայց նաւր կրնայ որ մը կոտորի, ու իր
ընտրած ասպարէզին փոս ու վսան-
գաւոր ըլլալը մէկէ աւելի ծանր պա-
րագաներու տակ կ'ազդարարուի իրեն:
Կը յուսանք սակայն թէ, եթէ դժբաղ-
դութեան մը պատահի, ուր որ ալ երթայ,
կրնայ ինքզինք ազատել նա, որովհետեւ
չ'կայ Անգղիական Մամլոյն մէջ մէկը
որ իրեն չ'ափ մտացի գրիչ մ'ունենայ եւ
կարենայ այնքան լաւ կերպով նկար-
ագրել ժամանակակից պատերազմա-
կան, ոչ-պատերազմական դէպքերը»:

Սըր Ուիլքերմ. Ըսթիտ մաղթե-
լով որ Տօքթ. Տիւրն Լանքեսան յօդ-
ուածներու շարք մ'ալ վերսկսի, կը
փակէ իր այնքան սիրուն ու հետաքրք-
րական յօդուածը:

ՎԱՀԷ

ԱՂԵՔՍ. ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ԳԱՂՏՆԻՔԸ

(Շար. ԺԳ. թիւէն)

«Այս տարի ալ տարբեր ճիւղեր,
մանաւանդ մայրենի լեզուն և արարե-
րէնը ալ աւելի փայլուն անցան և ընդ-
հանուր գոհունակութեան արժանացան»:

Այդ վկայութիւննիւ խորապէս
հաճելի պիտի հնչէ անշուշտ ամեն ազ-
նիւ և այդ անմեղ մանուկներուն մէջ
հայութեան ապագան տեսնող և անոնց
համար անձնուէր սիրտ կրող մարդու
ականջներուն: Սակայն կը ներէ՞ք
արդեօք որ քիչ մը կասկածանօք վե-
րաբերուինք ձեր խօսքին անկեղծու-
թեան նկատմամբ. երբ նախ՝ ձեզմէ
տարբեր վկայողներ կան. մէկ կողմ
ձգենք «Փիւնիկի» Տիար Խմբագրին ամ-

բողջական վկայութիւնը, բայց չենք կրնար առանց նկատողութեան թողուլ վեցերորդ դասարանին աշակերտներուն պարզ շարագրութիւն մը կատարել տալու ըրած առաջարկն, որ ժամանակի ոլորտեան պատրուակին տակ մերժուած է. մանաւանդ երբ նոյն իսկ Ս. Առաջնորդին՝ բանաւոր գտնելով սոյն առաջարկը՝ կրկնումն ալ անողոք Վեթօ—ի հանդիպած է: Երկրորդ՝ նոյն Ս. Առաջնորդին կիրակի օրը բեմէն ըրած յայտարարութիւնն ալ, Ձերօք քանչայու մէն տարբեր հով մը ունէր. Ս. Առաջնորդը հարցաքննութիւններու մասին ժողովուրդին բացատրութիւն տուաւ հետեւեալ իմաստով. ո՛չ լաւ էին, ո՛չ գէշ: Մենք Ս. Առաջնորդին ատենէն արտասանած խօսքերուն ճշմարտութեան վրայ հաւատք ունինք, գիտնալով հանդերձ թէ՛ Ս. Առաջնորդին բեմէն այս խօսքերով որակած հանցաքննութիւններուն իրական արժէքն ի՞նչ պիտի ըլլայ: Ո՛րչափ հաճելի պիտի ըլլար մեզ, եթէ նորին Սրբազնութիւնը հաճէր հրատարակութեան տալ ամբողջութեամբ իր տեղեկագիրը, զոր մատուցած է Պատ. Թաղ. Խորհուրդին և Հոգաբարձութեան, և որուն էութիւնը ոչինչ տեսնել բազմաբովանդակ բառերու մէջ ամփոփուած է եղեր:

Երրորդ՝ Պ. Յօդուածագրին՝ «եթէ նախընթաց տարին... մէկ երկու ճիւղեր փայտուն էին, այս տարի ալ սարբեր ճիւղեր, մանաւանդ մայրեկի շնորհ և արաբերէնը ալ աւելի փայլուն անցան» խօսքերէն անշուշտ սաչափն հետեցնել ներելի է թէ՛ նախընթաց տարիներու մէջ մայրենի լեզուն այնչափ փայլուն չէ եղեր, իսկ այս տարի աւելի փայլուն անցեր է: Որչափ որ գիտեմ, մայրենի լեզուն գասերուն մեծագոյն եւ կարեւորագոյն մասը, ինչպէս իմ ժամանակս, նոյնպէս այս տարի, միևնոյն անձի՝ այն է Պ. Ասքանազի ձեռքն էին, ուրեմն հաւանականաբար կրնանք ընդունել թէ իր խօսքերն անոր կը վերաբերին, որ՝ Պ.

Յօդուածագրին իսկ խոստովանութեամբը՝ այս տարի աշտաքոյ կարգի եռանդ եւ կարողութիւն յոյց տուած է, զոր նոյն չափով չէր ունեցած նախորդ տարիներու մէջ: Կը հաճի՞ք բացատրել ստոր պատճառը. արդեօք նա՞ ալ բացառիկ կրկնութիւններու դրութեան դիմած է:

Չորրորդ՝ նոյն լեզուի վիճակի մասին մեր երեքուկէս տարուան ունեցած անձնական փորձառութիւնն ալ իբր անօրէն՝ կասկածներ ունենալ կը թելագրէ մեզ, որու մասին քիչ մը վարը:

Պ. Յօդուածագիրը կրտէ. «գալով նախընթաց տարուան վիճակին այս տարուան քննութիւնը՝ իրենց անբողջական հասկաւ հանձնելով յոռեզոյն վիճակ մը յիշն ներկայացնէ»:

Նախընթաց տարիներու, ինչպէս և ներկայ տարուան քննութիւններուն ամբողջական բաղդատութիւնը ընելու և այս տարուանները նախընթացներէն «ոչ յոռեզոյն» գտնելու համար, պէտք է որ ատոնց եթէ ոչ բացարձակ ամբողջութեանը՝ գոնէ մեծագոյն և կարեւորագոյն մասերուն ներկայ գրտնուած ըլլաք: Իսկ Ձեր ներկայութեան չափն ու սահմանն ալ մեզ իրականապէս հաստատելու համար, հարկ է որ Ձեր յայտնի ստորագրութեամբը տեղն ի տեղ յիշէք այն բոլոր գասերը, որոնց ներկայ եղած և գոհ կամ գեղոհ մեկնած էք: Այդ հիմնական պայմանը չկատարած Ձեր խօսքերը ամեն ողջամիտ մարդու առջև բառերու կուտակութիւն ըլլալէ անդին ոչ մի արժէք չեն կրնար ունենալ, ուստի կը պնդեմ որ կատարէք այդ: Թէպէտ այս պահանջն ընելը ներկայ ուսուցչական խումբին ամենաբնական և արդար իրաւունքն էր, որոնցմէ ոմանց դէմ այնչափ անողոք և ոմանց համար չափազանց բարեայակամ գտնուած էք, սակայն այդ անձերը կրնան ունենալ լռելու պատճառներ, սրտնք դուցէ իրենց տատակտով շատ ալ արդարացուցիչ ըլլան, ուստի ես որ խնդրոյն մէջ լայն բաժին մ'ունիմ եւ լռելու պատճառ

մ'ալ չունիմ ընտա, կը պահանջեմ Ձեզ-
 մէ այդ բանը: Այս պահանջս մանա-
 ւանդ կը շեշտեմ այնու, որ ձգելով
 անցած տարիներու քննութիւնները,
 որոնց մէջ Ձեր ներկայութեան չափը
 մեզի յայտնի է, այս տարի իսկ այդ
 աստիճան ընդհանուր գատավճիռներ
 արձակելու իրաւունք տուող ներկայու-
 թիւննիդ հաստատելու էք փաստերով:

Այս տարի վարժարանին մտաւորա-
 կան յառաջադիմութիւնը, Պ. Յօգուա-
 ծագրին նամակէն հետեւցնելով, հե-
 տեւալին մէջը կը կայանայ եղեր-
 «չեղունեւու ճիւղը բարակակ յաջող»,
 «մանաւանդ մաշրեկի շեշտն եւ արա-
 բերեկը աչ արեղի փայլուն» անցեր են:

Ենթագրելով իսկ թէ Պ. Յօգուա-
 ծագրին այս վկայութիւնները ճիշդ ըլ-
 լան, կը հարցնենք բոլոր կրթական
 հարցով զբաղող մեր ազգայիններուն.
 Եթէ նախակրթարան մը, որ ֆրանսե-
 րէն և անգլիերէն լեզուներուն մէջ քա-
 ղակակ յաջող, իսկ մայրենի լեզուին և
 աշարբրէնի (որուն հետեւողները երեւ-
 ման չեր են) մէջ փայլուն եղեր է, աոգ եօ ք
 մեծ արգիւնք ցոյց տուած կրնա՞յ համար-
 ուիլ, այն աստիճան մեծ՝ որ յոստեմանե-
 րուն «սիրան յուսախաւաթիւն», իսկ լա-
 ւատեսներուն ալ «ընդհանուր դոհաւա-
 կութիւն» պատճառելու չափ զօրաւոր
 ըլլայ: Հապա ո՞ւր թողունք վարժարա-
 նին ընդհանուր կրթական-բարոյական
 վիճակը, որուն յուր կացութիւնը (պա-
 տասխանատուութիւնը թուէս ինն ա-
 միս առաջ հրատարած նախորդ անօրէ-
 նին վրայ նետելու չարամիտ և ինքնա-
 խաբ արգարացումով) այնչափ ուռու-
 ցիկ կերպով նկարագրած է Պ. Յօգուա-
 ծագրիը, որ մեզի աւելցնելիք գրեթէ
 շատ քիչ բան ձգած է:

Թէ ի՞նչ դրութեան մէջ էր վար-
 ժարանին մտաւորական և բարոյական
 վիճակը այն երեք տարիներու ընթաց-
 քին, յարում ես յիշեալ հաստատու-
 թեան մէջ անօրէնի պաշտօն վարեցի,
 հասարակութիւնը շատ լաւ գիտէ, այն
 հասարակութիւնը՝ որուն ամենէն կա-
 րեւոր, ամենէն պնդիւ և ամենէն ձե-

որնհաս մտքը՝ տարեշրջանի միջոցին և
 մասնաւորապէս հարցաքննութեանց
 ժամանակ՝ տասնեակներով այցելած,
 տեսած և վերահասու եղած է: Մենք
 լուսութեամբ կ'անցնենք բոլոր այն ան-
 ձանց անուններն և շնորհակալեաց ու
 քաջալերանայ խօսքերը, որոնք յիշեալ
 աւելիներով ուղղութեան մեզ, և եթէ
 երբեմն գիտողութիւններ ալ եղան,
 անոնք ալ ցաւ ի սիրա Պ. Ասքանալի
 մայրենի լեզուին դասերուն դէմ ուղ-
 զութեան, որոնց յաջողութիւնը այս տա-
 րի, կ'երեւի՝ Պ. Յօգուածագրին վկա-
 յութեան համեմատ, իբր միականի
 փայլած է կոյրերու մէջ:

Պ. Յօգուածագրիը կը գրէ. «նկա-
 տել պէտք է որ նախորդ Հոգաբարձու-
 թեան օրով ֆրանսերէնի և արաբերէնի
 պէս կարևոր լեզուներ վարժարանի
 «ծրագրէն դուրս թողուած» էին: Այժմ
 այդ երկու լեզուներն ալ կարող ուսու-
 ցիչներու ձեռամբ կ'աւանդուին և հա-
 մեմատաբար քիչ ժամանակի մէջ բա-
 ւական աղէկ արդիւնք տուած են»:

Այս խօսքերն ալ սխալի և ինքա-
 թիւրումի խառնուրդ մ'են: Իմ պաշտօ-
 նավարութեանս միջոցին երեք հոգա-
 բարձական մարմիններ հսկողութիւն
 ունեցած են վարժարանին վրայ: ա-
 ռալին երկուքէն ո՞րն է իր ակնար-
 կածը: Իայց թողունք այդ եւ դանք
 իրողութեան: Նախկին երկու հոգա-
 բարձութիւնները միշտ հետեւեալ սկզբ-
 բունքին վրայ յենլով գործած են.
 նախակրթարանի մը համար, որուն շր-
 վանը սո առաւելն եօթ (վերջին տա-
 րին իբր լրացուցիչ, զոր վարժարանը
 մինչև այսօր մի անգամ միայն ունեցած
 է, օրիորդաց կողմը չորս հոգիէ բաղ-
 կացեալ դասադասով մը) իսկ իրակա-
 նութեան մէջ վեց է, և որուն ուսա-
 նողները կեանքի պայքարին հետեւու-
 թեամբ 13-14 տարեկան հասակուն
 մէջ կը ձգեն վարժարանը, չորս լեզ-
 ուր դասաւանդութիւնը ապարդիւն և
 ֆրասակար դանելով ընդունած են նրեք
 լեզու միայն, առալին Հոգաբարձու-
 թեան պաշտօնավարութեան սկիզբները

այս ձևով. մայրենի լեզու, եւրոպական լեզու մը. անգլիերէն կամ ֆրանսերէն, և արաբերէն. իսկ պաշտօնավարութեան վերջերը կարծեաց փոխանակութեամբ՝ և երկրորդ Հողաբարութեան օրով հետեւեալ ձևով. մայրենի լեզու, անգլիերէն և ֆրանսերէն: Պ. Յօդուածագրին՝ ինչպէս և փափաքողներուն կը յանձնարարենք առաջին Հողաբարձութեան օրով պատրաստուած և պատուարձան Քաղ. Խորհուրդի Փոխ. Ատենապետ Մեծ. Տիար Է. քիզէրի ստորագրութեամբ վաւերացուած ծրագիրը: Ուստի եթէ անցեալ և նախորդ տարիներու մէջ ֆրանսերէն լեզուի դասախօսութիւնը տեղի չ'ունեցաւ, ոչ թէ «ծրագրէն դուրս թողուած» ըլլալովը, այլ նախկին ուսուցիչներէն մէկուն հրաժարման ու միւսին (Պ. Մ. Ասքանազ) ապիկարութեան և չնորհքով նոր դասախօսի մը պակասութեան պատճառով: Պ. Յօդուածագիրը անշուշտ կը յիշէ այս մասին եղած ջանքերը, բայց անդիտանալ կը ձևացնէ:

Թէ ո՛րչափ օգտակար կամ վնասակար է վեց տարուան դասընթացը ունեցող տեղւոյս Ազգ. վարժարանին համար չորս լեզուներու դասախօսութիւնը, կը յետաձգեմ ապագայ լուսաբանութեան, չուզելով միջանկեալ խնդիրով մը աւելի երկարել յօդուածս:

Բայց ջերմապէս կը յանձնարարեմ ամեն ձեռնհաս ազգայիններու, որ հրապարակային վիճաբանութեան նիւթընեն այս վերին աստիճանի շահեկան և մանկանց իրական օգուտը շօշափող մանկավարժական հարցը:

Պ. Յօդուածագիրը կ'ըսէ. «մասնաւորապէս աշակերտաց ընդհանուր կարգապահութիւնը զօրացնելու պէտք կայ», և վարը՝ «Քաղ. Խորհուրդը այժմ կը փափաքի... մանկանց կրթութեան (համարէն ուսանողաց բարոյական կրթութեան» ըսել կ'ուզէ թէ «երախայից դասարան»ին) ոյժ տալ ու խիստ միջոցներ ձեռք առնել վարժարանի մէջ կարգապահութեան ոգին ներմուծելու, որ ևս խորհ տեսչութեան քոչասու եւ զե

մարդ չ'ըջայու» քաղաքականութեան քերական շահ սկարսցած է: Այդ կարգապահութեան տկարանալուն հետեւանքն էր այն տխուր տեսարանը զոր Վանցի պատանի մը պաշտօնը քննութեանց վերջանալուն, հրապարակու համարձակելով քննադատելիչ ուսուցիչները... բայց պատիժի պակասը (ի՞մ օրովս թէ հիմայ) տեսալ մը անխլիանական ոգի մտայուցած է (ի՞մ օրովս թէ հիմայ) վաշտարանին մէջ»:

Այս տողերը իրաւցնէ Պ. Յօդուածագրին անմահ յիշատակութեան արժանի գլուխ գործոցներն են: Պ. Յօդուածագիրը իր իսկական դերին մէջն է: Ամփոփելով իր խօսքերը հետեւալը կ'ունենանք. թէ վարժարանի մէջ կարգապահութիւնը շատ տկարացեր է եւ զեր, թէ այս տկարացումը ի՞նչ քոչասու եւ «զեջ մարդ չ'ըջայու» քաղաքականութեան քերական է եղեր, թէ այս տկարացումին հետեւանքն է եղեր, որ Վանցի պատանի մը հարցաքննութեանց վերջանալու պահուն իր ուսուցիչներու մասին ծանր քննադատութիւն ընելու համարձակած է:

Մարդ չ'կրնար զարմանքը զսպել այս տողերուն մէջ փայլող տշամաբանութեան և հանուած շղթայակապ յաջող եզրակացութիւններու հանդէպ: Լսեցէ՛ք. ի՞նչ քոչասու եւ «զեջ մարդ չ'ըջայու» քաղաքականութեան, որ բնականաբար տեւած պիտի ըլլայ ամբողջ երեքուկէս տարուան պաշտօնավարութեան միջոցին, ապաւեր է եղեր իր պտուղները սաշու միւսէն ի՞նչ հրաժարումս, եւ ապա սխտեր է ծիլ ու ծալկիլ, եւ վերջապէս ուր ա՛նխ յետոյ իր նշանաւոր պտուղը յառաջ քերտեր է Վանցի պատանիի մը միջոցաւ, որ ի՞նչ հրաժարած ժամանակ սակարիւն Վան կը գտնուէր գուցէ, եւ ի՞նչ հետեւանքն վեց ա՛նխ յետոյ միւսյն Աղէփաւնորիս գաղով մտեր է վարժարան իբր աշակերտ, եւ միւսիսյն երկու ա՛նխ շարունակած է:

Շիտակը խօսելով այսպիսի զօրաւոր արամբանութիւն մը Ամերի-

կեան կամ Անդլիական (որոնց մէջ մեծ տեղ բռնած է տրամաբանութեան ուսումը) իննամեալ դաստիարակութեան մը հետեանքն ըլլալէ աւելի՝ Պ. Յօգուածագրին այդ ճիւղին մէջ ունեցած արսաքոյ կարգի բնատուր հանճարին վերագրելի է (1. 1. 1.):

Բայց անշուշտ ես տակաւին մեծ պատճառներ ունիմ շնորհակալ ըլլալու Պ. Յօգուածագրէն, որ կերելի ինձ խնայելով (!) բաւականացեր է այսչափով, և հաճեր է մէկիկ մէկիկ թուել պաշտօնս ձգելէս յետոյ վարժարանին մէջ պատահած ուրիշ ցաւալի իրողութիւնները, որոնք հարկաւ նոյն տրամաբանական հետեութեամբ՝ իմ թոյրատու եւ «գէշ մարդ չըլլալու» քաղաքականութեան հետեւին՝ ներքին գիտակից համոզումը տեղոյս Հայ հասարակութեան, որոնց շատերուն զաւակները վարժարան կը յաճախէին, և որոնցմէ լսած եմ շարունակ շնորհակալութիւն և քաջալերութիւն, թէ՛ բերանացի և թէ՛ գրաւոր՝ ազգային թերթերու մէջ, և որոնց այդ ինքնաբուզի ազնիւ արտայայտութիւններուն համար միշտ շնահպարտ եմ:

Ենորհակալ եմ, որ ուսուցչաց մէջ տիրող երկպառակութեան և ատելութեան պատճառով ամիսներէ ի վեր ուսուցչական ժողովներուն գաղարումը վարագուրած է:

Ենորհակալ եմ, որ աշակերտաց ներկայութեան երկու ուսուցիչներու մէջ տեղի ունեցած՝ և հայհոյանքներով ու դաւազանի սպառնալիքներով համեմուած՝ կոխըլլութեան տուած է:

Ենորհակալ եմ, որ օրիորդաց երկու բարձրագոյն կարգի աշակերտուհիներուն՝ իրենց ուսուցիչներուն մէկէն դժգոհ ըլլալով, և այլապէս ձայներնին լսել տալ չկարողանալով, անոր դասարանը երթալ մերժելնին, և եղած պնդումին վրայ՝ վարժարանը ձգելով տներնին երթալու համարձակելնին չէ յիշատակած:

Ենորհակալ եմ, որ տասնեակներով ծնողքներու՝ վարժարանին բարեկարգութենէն յուսահատ՝ իրենց զաւակները հաննելնին հրապարակ չէ հանած:

Ենորհակալ եմ, որ աշակերտներուն իրենց ուսուցիչներուն և ընկերներուն դէմ անպատշաճ վարմունքնին և խօսքերնին երեսս չէ տուած:

Վերջապէս հազար շնորհակալութիւն

թիւն այն վարմունքնին համար, որ վերոյիշեալներուն պէս իմ հրատարումէս յետոյ վարժարանին մէջ պատահած ուրիշ ցաւալի իրողութիւնները զանցառութեան տուած է:

Կը հարցնենք. այսչափ տխուր հետեանքներու ծնունդ տուող իմ թոյլատու և «գէշ մարդ չըլլալու» քաղաքականութիւնս արդեօք ուսանողաց վերաբերութեամբ եղած է միայն, թէ պաշտօնակիցներուս ալ:

Ինչ որ ալ ըլլայ Ձեր պատասխանը, Ձեր առանց դրական փաստերու բարձանջանքներուն տեղ, մենք ունինք իմ անաչառ և բարեօք պաշտօնավարութեանս մասին՝ ներքին գիտակից համոզումը տեղոյս Հայ հասարակութեան, որոնց շատերուն զաւակները վարժարան կը յաճախէին, և որոնցմէ լսած եմ շարունակ շնորհակալութիւն և քաջալերութիւն, թէ՛ բերանացի և թէ՛ գրաւոր՝ ազգային թերթերու մէջ, և որոնց այդ ինքնաբուզի ազնիւ արտայայտութիւններուն համար միշտ շնահպարտ եմ:

Բայց ցրելու համար ամէն կասկած, ցոյց տալու համար որ Պ. Յօգուածագրին ինձ վերագրած յիշեալ թերթիւնները՝ թէ աշակերտաց և թէ պաշտօնակիցներուս նկատմամբ՝ ճշմարտութեան ստուեր մըն իսկ չունին, վերջապէս հոս կամ այլուր գտնուող ազգայինները սխալուելէ զգուշացնելու համար, հակառակ ներքին զգացումներուս, յառաջ պիտի բերեմ այստեղ իմ պաշտօնավարութեանս վերաբերող պաշտօնական գրութիւններէն մէկ երկու հատուած:

17|29 Յունիս 1899. «Ժողովս (Վարժարանին Հոգաբարձութիւնը) վերահասու ըլլալով վարժարանիս բարեկարգ վիճակին, և ծրագրին ու կանոնագրին, իր շնորհաւորութիւնները կը յայտնէ Տեսուչ Տիար Յ. Պէքրեանին իր արդիւնաւոր և անխնջ ջանքերուն համար»:

Ստորագրութիւնք

Ատենագալիս Ատենապետ
Տ. Կամարակամ Լ. Աժտէրեան
Ա. Ճէվահիրճեան

13|25 Օգոստոս 1899: «Օրակարգին անցնելէ առաջ Հոգաբարձութիւնս քաղցր պարտականութիւն մը նկատեց իւր սրտագին շնորհակալիքը յայտնել վարժարանիս բարեջան Տետուչ Տիար Յ. Պէքարեանին, իւր գերազանցապէս բարւոք պաշտօնավարութեանը համար, զոր անժխտելի կերպով հաստատեցին տարեկան հարցաքննութեանց անթիւ երկսեռ աշակերտաց ցոյց տուած գեղեցիկ արդիւնքներն և տկնյայտնի յառաջդիմութիւնները»:

Ստորագրութիւնք

Վ. Ատենադպրի Ատենապետ

Ա. Ճէվահիրճեան Լ. Աժտէրեան

(Մեծ. Տիար Տ. Կամսարական

Երրոպա մեկնած ըլլալուն՝ բացակայ էր):

Հետևեալ պաշտօնական նամակն ստացած եմ Պատ. Հոգաբարձութեանէն:

Աղէքսանդրիա 12|24 Սեպ. 1899

... Յակոբ Պէքարեան

Տեսուչ Ազգ. Երկ. Վարժարանաց

Աղէքսանդրիոյ

«Հոգաբարձութիւնս մեծապէս գնահատելով վարժարանիս մէջ Ձեր խղճամիտ պաշտօնավարութիւնը իբր Տեսուչ և իբր Դասախօս՝ որոց իւրաքանչիւրին համար ց'արդ ցոյց տուիք ամենամեծ կորով ու լիակատար արժանիք՝ պատշաճ համարեց զՁեզ վարձատրել Ձեր ամսաթոշակին վրայ յաւելում մը ընելով... Հոգաբարձութիւնս արժան կը համարէ յայտնել Ձեզ թէ, իւր ըրած սոյն յաւելման մէջ համեմատութեան եզր մը դրած չէ Ձեր արժանեաց, այլ պարզապէս հետևած է պիտօճէին թոյլատրած սահմանին...»:

Ի Դիմաց Հոգաբարձութեան

Վ. Ատենադպրի Ատենապետ

Ա. Ճէվահիրճեան Լ. Աժտէրեան

(Մեծ. Տիար Տ. Կամսարական


տակալին բացակայ էր իր ճանապարհորդութեան պատճառով, բայց իր հաւանութիւնը տուած էր կանխաւ իր

պաշտօնակիցներուն):


Ընթերցողաց բարձր ուշադրութեան կը թողունք այս պաշտօնական վկայութիւնները բազդատել Պ. Յօդուածագրին զրաբանութիւններուն հետ, և հարկ եղած եզրակացութիւնները հանել:

Թէպէտ այս վաւերացութիւնները ինքնին բաւական են ուղուածէն աւելին հաստատելու, սակայն թող ներուի ինձ յիշատակել երկու դէպքեր ալ, որոնց մէջ պաշտօնակիցներուս նկատմամբ պաշտօնիս պարտականութիւնները անաչառ կերպով կատարած ըլլալու համար, դիտակցաբար անձնական շահերուս դէմ գործած եմ:

ՅԱԿՈԲ ՊԵՔԱՐԵԱՆ



ՀԵՐԲՈՒՄԻ ՄԸ ԱՌԹԻՒ



Արշալոյս թերթի 202 թուոյն մէջ «Գ. Յ. Պէշիրեան եղբարք, կօշկակար» ստորագրութեամբ՝ հերքմնագիրը անակնկալ մ'եղաւ ինձ, նաև անոնց համար, որոնց աչքերէն ծածկուած չէին յիշուած խնդրոյն բոլոր պարագաներն, մանրամասնութիւններն ու շարժառիթները: Ճշմարիտ իրողութիւն մը «սխալ հասկացողութիւն» նկատել եւ մարտելի չքմեղանք մը ստեղծելու համար մանուածապատ պարբերութիւններով խնդրոյն բոլոր պատասխանատուութիւնները ո եւ է պատճառաւ իրենց անհաճոյ թուող Գործադիր Ժողովոյ անդամներէն միւսին՝ կոտրելու աստիճան նուրբ կոնակին վրայ դնելը՝ խոհականութիւն չէ՛ երբէք:

Մեր մէջ կազմակերպուած բոլոր բարեգործական ընկերութիւններուն նպատակը հիմնապէս վսեմ ու նուիրական է, որոյ ճշգրիտ իրականացման փափաքող է բովանդակ հայութիւնը, ե ոչ իբր գերագոյն համարառու մը, կ'ըղձայ ըստ կարելոյն իրազէկ ըլլալ գործերու ընթացքին. հետևաբար

այս պարագային, Գործադիր Ժողովը 'ի վաղուց զինքն զբաղեցնող այս խընդիրը հրապարակ նետելով՝ իրեն վրայ ծանրացող բարոյական ծանրակշիռ պարտականութիւնը միայն կատարած է:

Եւ սակայն ինչո՞ւ այսքան իրարանցում Պազար-Մուրուրի մէջ...

Անշուշտ կը ներուի ինձ երկու տողով բացատրել:

Որչափ որ չեմ ուզեր վիրաւորել Պէշիրեան եղբարց դիւրազգածութիւնը, սակայն ճշմարտութիւնը 'ի յայտ բերելու համար կ'ստիպուիմ համառօտիւ լուսաբանել խնդիրը:

Ակնայ Որբախնամ Ընկերութեան Գործադիր Ժողովը մասնաւոր հաւաքիչ չ'ունի, և ժողովոյ ամեն մէկ անգամը իրեն ծանօթ եղող բաժանորդներէն հաւաքելու պարտականութիւնն ու միանգամայն բարոյական պատասխանատուութիւնը յանձն առած է անձնուիրաբար:

Պէշիրեաններէն ամսավճարները հաւաքելու գործը ինձմէ առաջ ուրիշ անդամի մը յանձնուած էր: Յիշեալը իր դիմումներուն ապարդիւն մնալէն ձանձրացած՝ եղելութիւնը ներկայեց ժողովին, որ արժան սեպեցինձ յանձնել Պէշիրեաններու հաշիւը, խորհելով թէ հաւաքիչի այս փոփոխումէն իսկ բաւական պիտի ըլլայ այժմու փափկանկատ ու դիւրազգած Պէշիրեաններուն ճանչցնելու իրենց բարոյական պարտաւորութիւնները: Սակայն ցաւալի է ըսել թէ՛ այս լաւատես ու բարեմիտ կանխամտածումը ո՛չ միայն չիրականացաւ, այլ և տեղի տուաւ կարգ մը չարամիտ ու անտեղի զրոյցներու:

Եւ սակայն պարտաճանաչ Գործ. Ժողովը միշտ աչքին առջև ունենալով ընկերութեան նպատակը, կարևորութիւն չտուաւ պահ մը եղած զրոյցներուն, եւ իր վարչական եղանակին մէջ աւելի ներողամիտ, լուրջ ու խոհեմ չարժեքու համար, երրորդի մը յանձնեց յիշեալներու բաժնեգրիները գանձելու գործը, որ դժբաղդաբար իր նախորդաց վիճակին ենթարկուեցաւ:

Գործադիր Ժողովը՝ իր շուրջ դարձող չարաբանութիւններէն զուրած այլ ևս, ստիպուեցաւ հրապարակել իրողութիւնը, որպէս զի ապագային հանրութեան առջև ու է պատասխանատուութենէ ազատ և խճրճանքէ զերծ մնայ:

Արդ, խնդիրը ըստ բաւականին լուսաբանելէ վերջ, հիմայ իրենց ամսավճարներն ընելու բարի ու դժոտ տրամադրութիւնը «իբր պարտաճանաչ հայեր» ցոյց առնող Պէշիրեաններուն չքմեղացուցիչ փաստին (°) վրայ կը թնելով՝ իրաւունք կունենամ հարցնելու թէ. — Ի՞նչու չվճարեցին իրենց ամսավճարները ինձի և ինձմէ առաջինին, որ տասէ աւելի անգամներ դիմելով հանդերձ լուռ մնացինք: և բարոյական ի՞նչ տեսակ... զգայմամբ երեք դիմողներէն միոյն յարաբերական որակը բարուրանք մը կը նկատեն իրենց ակներև անպարտաճանաչութեան:

Իրապէս անկեղծ ըլլալու է, բարեկամներ, և ծեփած նկարագրով մը ապրիլը այլ ևս բաւական սեպելու է, գոնէ որբերու հանդէպ:

Գահիրէ, 16 Օգոս. 1901
ՄԻՆԱՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

ԿԸ ՎԱՅԼԷ՞Ր

Անոնք որ ազգային խնդիրներով քիչ շատ կը հետաքրքրուին և ուղղակի կամ անուղղակի կը մասնակցին հանրային հարցերու վիճաբանութեանց, ի հարկէ շատոնց տեղեկացան թէ Ս. Առաջնորդին 210 ստորագրութեամբ հանրագրութիւն մը ներկայացուեցաւ, որով կը խնդրուի Ն. Սրբազնութենէն որ Սահմանադրութիւնը յարգել ու գործադրել տայ Աղեքսանդրիոյ մէջ ալ:

Մեր նպատակէն դուրս է այդպիսի պահանջքի մը ներկայ պարագայի մէջ օգտակար կամ վնասակար ըլլալը փաս-

տաբանել և կամ ունէ մէկ կողմը պաշտպանել միւս կողմէն եկած յարձակումներուն դէմ: Այլ մեր նպատակն է ցոյց տալ թէ կ'նչ արդիւնք կրնան ունենալ Տիար Լևոն Մկրտիչեանի անխոնջ ջանքերը արդի Պատ. Թաղական Խորհրդին սահմանադրական ըլլալը պացուցանելու համար:

Վերոյիշեալ Պարոնը, միշտ հաւատարիմ ամենապարզ խնդիրներէ իսկ ազգին մէջ բաժանում և երկպառակութիւն առաջ բերելու ուղղութեան, անմիջապէս բողոքի ձայն բարձրացուց, բացարձակապէս յայտարարելով թէ Սահմանադրութիւնը միշտ յարգուած է Աղեքսանդրիոյ մէջ և թէ արդի Թաղական Խորհուրդը սահմանադրական է իր կազմութեամբ, մինչդեռ իրօք ինքզինքը սահմանադրական նկատող Թաղական Խորհուրդ մը չի կար մէջտեղ, քանի որ արդի Թաղական Խորհրդի անդամները միշտ մերժած էին հազնիլ իրենց բոլորովին չի յարմարող և անպատշաճ այդ հագուստը:

Եւ որովհետեւ, ինչպէս ըսինք, չի կար այդ տեսակ Թաղական Խորհուրդ մը, Տիար Լևոն Մկրտիչեան զայն ստեղծելու ձեռնարկեց անօրինակ եռանդով մը. այսինքն, իր համբաւաւոր յօդուածէն վերջ, մէջտեղ նետեց հակահանրագիր մը, որպէս զի 500 ստորագրութիւն ժողովելով՝ ջախջախիչ կերպով (!!!) փաստէ թէ սահմանադրական է ներկայ Թաղական Խորհուրդը:

Բայց իր ամենամեծ քաջագործութիւնը՝ Թաղական Խորհրդին (թէպէտ ոչ պաշտօնական) հովանաւորութիւնը և քաջալերութիւնները շահիլն է իր հակահանրագրին համար:

Այս բանը նախ տարօրինակ և անհասկանալի կրնայ թուիլ: Սակայն երբ նկատողութեան առնենք այն կատարեալ վստահութիւնը որ յիշեալ Թաղական Խորհուրդը ունի Տիար Լևոն Մկրտիչեանի տեսակ մը յատկութիւններուն և մասնաւորապէս հետաքրքրեանը վրայ (վստահութիւն մը որ չարաչար դործածելով հանդերձ կը յա-

ջողի հաստատ պահել), շատ պարզ և հասկանալի պիտի ըլլայ ներկայ Թաղական Խորհրդին այդ տեսակ սխալ և անպատուաբեր քայլ մը առնելը: Անպատուաբեր ըսինք, որովհետեւ Խորհուրդը իր իսկ ստորագրութեամբ հաստատած է թէ ինք լոկ պարագաներու բերմամբ և առժամանակեայ կերպով կազմուած Թաղական Խորհուրդ մ'է: Եւ արդէն որեւիցէ պատուաւոր մարդ որ տեղեակ է ամբողջ պատմութեան և անցած դարձածներուն՝ չէր կարող տարբեր կերպ ներկայացնել իրողութիւնները:

Ուրեմն այն հանրագիրը որուն մէջ Տիար Մկրտիչեան իրերը բոլորովին տարբեր կերպով մը ներկայացնելով ժողովրդին ստորագրել կուտայ, միայն կը ծառայէ նախ՝ իր մէկ անխորհուրդ սխալը իբր ուղիղ կամ թէ ըսենք իր սուսք իբր ճշմարտութիւն ներկայացնելու և երկրորդ Պատ. Թաղական Խորհուրդը հասարակութեան ծաղրելի դարձնելու:

Այդ հակահանրագրին համար ստորագրութիւն ժողովելու ձեւը կարժէ զատ յօդուածով մը իբր զաւելչտ ներկայացնել ժողովրդին. բայց առ այժմ այդ մէկդի թողլով գանք մեր նիւթին:

Սեպտեմբեր թէ 500 ստորագրութիւն ժողովեցին այդ հակահանրագրին համար որ Տիար Լևոն Մկրտիչեանի բարձր մտքին ծնունդն է. միթէ ատիկա պիտի կարողանայ Թաղական Խորհուրդը սահմանադրական օրէնքներով ընտրեալ Թաղական Խորհուրդ մը շինել. — Ո՛՞՞ ԵՐԲԵՔ, քանի որ ժողովրդէն ընտրուած Թաղական Խորհրդին յոժման և նոր առժամեայ Թաղական Խորհրդին կազմութեան մասին Տիար Մ. Տամատեանի «Փիւնիկ» ի մէջ դրած ամբողջ պատմութեան ստուգութիւնը կը հաստատեն հին և նոր Թաղական Խորհրդին անդամները և անոնք որոնք յիշեալներու բերնէն մէկէ աւելի անդամներ լսած են ճիշդ և համանման պատմութիւնը:

Որովներկայ Թաղական Խորհուրդը պիտի մնայ ինչ որ է, այսինքն սահ-

մանագրական օրէնքներու համաձայն շնորուած Թաղական Խորհուրդ մը, եթէ նոյն իսկ Մէկ Միլիոն ստորագրութեամբ քանի մը հատ հանրագրեր ալ ներկայացուին: Միևնոյն աստիճանի վրայ Խորհուրդը, որ մինչև հիմա ճանցած է իր կազմութիւնը և երբեք իր չունեցած մէկ առաւելութեամբը չէ ուզած պարծենալ, այդ ճշմարտասիրութիւնն ու ազնուութիւնն ալ կորսնցուցած պիտի ըլլայ:

Ժողովրդին այն մասը որ վերջէն խնդրոյն պիտի տեղեկանայ, պիտի կորսնցնէ ի ներկայիս իր վրայ ազդեցութիւն ունեցող անձերուն նկատմամբ իր յարգանքն ու վստահութիւնը, քանի որ այդ անձերը կեղծ առաջնորդներ եղած էին իրեն:

Եւ Տիար Լևոն Մկրտիչեան իր յաղթական դրօշակը պիտի պարզէ միայն ինքզինքը խաբելու և ընդհանուր անարդանքի առարկայ ըլլալու համար: Ընդհանուր կրօնով, վասն զի իր տուած սխալ տեղեկութիւնները իրենց նպատակով համարողներն անգամ չեն կրնար իրապէս յարգել այդ գծուծ դերը կատարող արարած մը:

Ժողովրդին դեռ մէկ կարևոր մասին ներկայ Թաղական Խորհրդին վրայ ունեցած համարումը և վստահութիւնը պէտք էր այդպէս չարաչար գործածել և կը վայլէր Խորհրդին ժողովրդականութիւնը ապացուցանելու համար այդ տեսակ պախարակելի և զզուելի միջոցներ ընտրել:



Սոյն գրութիւնը «Փիլոսոփ» ինստիտուտի ղեկավար Կարապետ Բալայանի կողմէն հրատարակուելով, բայց նիւթերու առատութեան պատճառաւ յետաձգուած էր:

ԲՍՅ ՆԱՄԱԿ

Լևոն Մկրտիչեանին

«Սահմանագրութեան պաշտպան»

ները» խորագրով Սրչալոյսի մէջ երկրորդ կողմէն յօդուածները ճշմարիտ զայրոյթէ մը աւելի խոր նողկանք մը պատճառեցին Աղէքսանդրիոյ խաղաղասէր հասարակութեան, հանգէպ յօդուածագրին՝ որ ընկերային ամենփականակատութիւնները մէկգլխի ձգած անհեթեթ ածականներով կը մկրտէր ժողովուրդը:

Թէպէտև յօդուածագիրը, Տ. Լևոն Մկրտիչեան, իւր երկրորդ յօդուածին մէջ ճիգեր կ'ընէր ինքզինքը արդարացնելու. ըսելով թէ՛ ինքը ժողովրդին մէջէն ինքնապէս մը միայն կ'ուզէր իր խօսքերը և ոչ՝ ամբողջ ժողովրդին. սակայն այդ բանը աւելի ևս ազարտած չէր ըլլալ իւր նկարագիրը-թէ երբեք ունի: Ո՞ր աստիճան վատ մ'եղած պիտի ըլլար ինքը, որ յանդգնէր երկու հարիւր տասը հոգիէ բաղկացած խրատախօս մը՝ սանձարձակ անարդանքներ տեղալ, զայն մերթ ինաստայ, մերթ սկստաւիտ, կոկոզավիտ անուանելով ըստ իր քմաց: Իւ տեսնենք թէ ի՞նչ թերութիւն կը գտնէր այդ խմբակին վրայ:

Մեր ամենուս դիտցած բանն է որ Սրբ. Առաջնորդին Աղէքսանդրիա ժամանելուն, հաւաքաբար հանրագիր մը մատուցուած էր, Սահմանագրութեան Աղէքսանդրիոյ մէջ գործադրուելուն՝ իր օժանդակութիւնը խնդրելու համար:

Միթէ ժողովուրդն՝ իր այս պահանջին մէջ արգար իրաւունք մը չունէր, մանաւանդ Աղէքսանդրիոյ պէս ազատ երկրի մը համար, ուր ոչ ոք խոչնդոտ կ'ըլլայ իրեն առանձնաշնորհուած ազգային ազատութիւնները վայելելու:

Եւ ասոր ո՞ր կէտը շղերուն կը դպչէր մեր պարսն դրագրին... ո՞ր կէտը գրգած էր զինքը սոյն օրինակ չարամիտ և ցածողի յօդուածի մը խմբագրութեան:

Ու մտածել թէ՛ իրաց յայտնի վիճակին մէջ, շատ մը ճշմարտութիւններ յեղաշրջելով է որ սահմանագրութեան

գոյութիւնը հաստատելու կը ճգնի. ի՞նչ ապուշ բան:

Եւ երբ իր դիտակից խեղաթիււրումներուն կը պատասխանուի՝ խառնակչի դեր կը կոչէ այդ բանը ինքը, և մօնօրօջի անճահ բառը կը մխրճէ իր յօդուածին մէջ: Միթէ ժողովուրդը իրեն հանդուրժելու չափ տկարամիտ կզդայ այդ Առման Սիլվէսթրից ցաւագար աշակերտը, որ ողորմելի էր. դիժարանութեամբ մը հրապարակ կը նետուի իր գձուձ հաշիւները կարգադրելու համար:


Չեմ ուզեր այդ կէտերուն վրայ ծանրանալ, զի արդէն ասկից առաջ «Փիւնիկի» մէջ յաջորդաբար երեցած յօդուածները՝ բաւական լոյսեր կը սփռեն տեղական ազգային վարչութեան անկանոն ու հակասահմանադրական վիճակին վրայ: Մի միայն սա իրողութիւնը պիտի կրկնեմ ողջամիտ հասարակութեան հետ, թէ՛ Լ. Մ. ի՞նչ իրաւամբ կը յանդգնի ժողովրդի մը պատկառելի մասին, իր խօսքովը խնքակի մը, հասցէին սոյն օրինակ վատլեզու և նուաստացուցիչ գրութիւն մը նետելու: Ինքը ազգային անտուկէն վարձեալ մի քարտուղար, ի՞նչպէս կը ժպրհի իւր ազգայնոց հանդէպ, անամօթաբար գործածելու սոյն երգիծական անճոռնի ոճը:

Արդ, կը յանձնարարեմ քեզ, պարո՛ն քարտուղար, որ փութաս ետ առնել սոյն յօդուածներուդ նախատակից պարունակութիւնը, և ներում խնդրես հրապարակաւ մեծարգոյ ժողովրդէն. ապա թէ ոչ՝ օրէնքը յարգող ժողովուրդը գիտէ նաև ինքզինքը յարգել տալ քեզիպէսներէն. . . :

Հ. Պ. Խ.

Աղեփսանդրիս 22 Օգոստոս 1901

Ռ Է Ք Լ Ա Մ



Լեոն Մկրտիչեան, Կուսակցապետ, Դիւանապետ, Դպրապետ, Դեր-Դատաւոր, Խորհրդական, Թղթակից, կալուածոց վաճառման միջնորդ, Մատակարար, Համարակալ, Ուսուցիչ, Սնանկներու խշափող, «Արշալոյս» Խնամակալ, ևն, ևն. նոյն պաշտօնաթերթի 204 թիւով հրատարակած է հետեւեալ ռեֆրալը, զոր մենք ձրի կը հրատարակենք՝ ի դիտութիւն ողջամիտ հասարակութեան:

Ռ Է Ք Լ Ա Մ

Թաղ. Խորհուրդը վեց անգամ է կը բաղկանայ, որոնց չորսը ժողովուրդէն ընտրուած (ԻՆՔՆԱԿԱՉՄ) և երկուքը օժանդակ (յատկապէս կարգուած, իրենց օրէնսգիտութեան շնորհիւ, այն ժամանակուան ազգ. դատերը. . . կորսնցելու համար), իրենց անժխտելի արժանիքովը և հեղինակութեամբը հանրածանօթ:

Թաղ. Խորհուրդը իր կազմութեամբը եւ ոգիովը Սահմանադրական է. (Ամէ՛ն ըսէ՛ք այս մաղթանքին):

Թաղ. Խորհուրդը իր մատակարարական և յարաբերական աշխատութիւններէն զատ, սիրով կը կատարէ իրեն դիմող ազգայիններուն բոլոր խնդիրները. (Ապրի՛ն Մենձ աղաներ, հազար յաւիտեան):

Թաղ. Խորհուրդը այսօր ամենաբարգաւաճ վիճակի մը հասունցած է (տա՛նձ է ի՞նչ է. հասունցած ըսել կ'ուզէ) ազգային հաստատութիւնները. — Օրինակի համար երկ. վարժարանը, որուն ներքոյեանը շինած էր դարձեալ այս ուէքլամին հեղինակը):

Թաղ. Խորհուրդը իր անդամոց հեղինակութեամբը այսօր պատկառելի դիրք մը կը գրաւէ յաշս կառավար




րութեան և օտարաց. — (այնչա՞փ մի-
այն, յաչս ազգայնոց պատկառելի չէ՞
արդի թաղ. Խորհուրդը, ըսել կ'ուզէ):

Թաղ. Խորհուրդի իւրաքանչիւր
անդամին անհատական պարկեշտու-
թիւնը ամեն սողտանքէ վեր է. (Լեոն
Մկրտիչեան Պատ. Թաղ. Խորհուրդի ան-
դամոց խոստովանահայրն է աշդեօք):

Ասկէ աւելի ի՞նչ կ'ուզէք ո՞վ
«Սահմանադրութեան Պաշտպաններ»:
Ի՞նչ կուզէք, ի՞նչ կուզէք, ի՞նչ կու-
զէք:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ



«Փիւնիկ»ի Խմբագրութիւնը իր
վշտակցական զգացումները կ'արտա-
յայտէ մահուան առթիւ Տիաշ Ծերօն
Խորասանճեանի, որ հայ հասարա-
կութեան մէջ յարգուած անձնաւորու-
թիւն մ'էր, ծանօթ՝ իր պարկեշտու-
թեամբ, և մխիթարութիւն կը մաղթէ
ողբացեալի գերդաստանին:

Այրի Տիկին Աղանի Խորասան-
ճեան, Տիարք Վահան և Մաքսուտ
Խորասանճեան, Տիար Նշան Կիւրճեան
և իւր զաւակունք, և Գալֆաեան, Ար-
շակեան, Շահպաշ և Չարազ ընտա-
նիքները «Փիւնիկ»ի միջոցաւ կը յայտ-
նեն իրենց հրապարակային շնորհակա-
լութիւնն ամեն բարեկամաց ու ծա-
նօթից, որոնք ներկայ գտնուեցան
հանգուցեալ Տ. Ծերօն Խորասանճեանի
յուզարկաւորութեան տխուր հանդի-
սին:

Մեր Ընթերցողներէն


Կը խնդրենք որ ներողամիտ ըլ-
լան ներկայ թուին մէջ չ'տեսնելով
«Անթաղ Իիակի մը վրայ» խմբագրա-
կանը, որուն հրատարակութիւնը, նիւ-
թերու առատութեան պատճառով,
յետաձգեցինք յաջորդին:

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԿ Բ. Ի ԵՒ ԱՆՈՐ ՊԱՊ ՈՐԴԻՈՅՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ


ՈՂԲՈՅՏԵԱՆ ԳՐԱԳԷՏ ԵՂԻՍՉՍՐ ՄՈՒՐՏՏԵԱՆԻ



Ազգ. Պատմութեան մէկ կարեւոր
կէտը լուսաբանող խիստ շահեկան պա-
րունակութեամբ օոյն գիրքը. 1998°
էջերով որ լոյս տեսած է Հայկական
«Արաք» Տպարանէն կը ծախուի թղղ-
թատարի ծախքով 2 1/2 Ֆր. ի:


Գնել փափագողք կրնան գիմել
հետեւեալ հասցէին.

Imprimerie Arménienne L'«Arax»
ALEXANDRIE EGYPTE



ԿԱԹՈՒՍՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ


ՆՈՐ ԴԱՐ



Այս նոր բացուած ճաշարանին ա-
ռաւելութիւններն են. ծովեզերեայ
օդ, ամենամաքուր սպաս, և խնամ-
եալ սպասարկութիւն, — ինչ որ կը
փնտուռի յաճախ ուրիշ ճաշարանաց
մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշա-
կով պատրաստուած, իրենց համեղ ու
այլազան հանգամանքներով արժանի
են ամենապահանջկոտ քիմքերու դնա-
հատման:

Գիմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը,
Ապու Չատըր փողոցին մէջ, Ղազար-
եան Եղբարց Վաճառատան գիմաց.
գնացէ՛ք, ճաշակեցէ՛ք ու տեսէ՛ք:



SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ըն-
կերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ

Ա.Մեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիւնեյ առ Ընդհանուր Գործակալ ևս Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփասանորիս, պզտիկ Մէնշիե Ապուսարսա փողոց թիւ 10

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բե-
րել տալով եւրոպական ամեն տեսակ
ընտիր դեղորայք, սրեսխաշիթներ և
հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով
ըլլալ դեղերուն ինամեալ ևս արագ
պատրաստութեան ու գիններու չափա-
ւորութեան մասին:

Ինդարանս կը յաճախեն Հայ և
օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս
նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու
փորձ մանկաբարձներ:

ԳԼՈՐԳ ԹՕԳՅԱԹԵԱՆ

ԿԱՆԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapisserie)

Քաղաքիս երեւելի հայ տուններուն
ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ
գոհացուցիչ պայմաններով ամեն տե-
սակ կահեղէններ, վարագոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը
կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՈ

Արանց, կանանց ու մանկանց ա-
մեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու
պատրաստ, կը վաճառէ. ապրանք-
ները մաքուր, տոկուն ու ճեւղոր. կը
մրցի բոլոր օտար վաճառատանց հետ,
գիններուն աժանութեան կողմէն:

ՆՈՐ ՀՍԵՎԱԿԱՆ ՃՍՇԱՐԱՆ

Մէնշիյե Հայկ. Մեծ Սրճարանին ետին

Յաճախորդները պիտի գտնեն զով
ու օգտւէտ տեղ մը, մաքուր սպասար-
կութիւն, համեղ ու պէս պէս կերա-
կուրներ, քաղցրաւենիք, միրգեր, ըմ-
պելիք ևն. խիստ չափաւոր գիններով:

Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի կանխիկ վճարումով ու գոհացու-
ցիչ պայմաններով:

Այցելեցէ՛ք մէկ անգամ ու պիտի
տեսնէք նոր ճաշարանին առաւելու-
թիւնը: